| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ №6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | ConverseBank | EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC BOARD MEETING MINUTES №6 |
|---|---|---|

| | |
|---|---|
| Նիստի ամսաթիվը՝ 06.03.2015թ<br>Ժամը՝ 17:00 | **Date:** 06.03.2015<br>**Time:** 17:00 |
| **Վայրը՝** ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Վ. Սարգսյանի փող., 26/1: | **Place:** 26/1 V. Sargsyan str. Republic Square, Yerevan. |
| Մասնակիցներ՝ | Participants: |
| ***Խորհրդի նախագահ՝*** *Արմեն Տեր-Տաճատյան:* | ***Board Chairman:*** *Armen Ter-Tachatyan* |
| ***Խորհրդի անդամներ՝*** *Ջուան Պաբլո Գեչիջյան (մասնակցել է հեռախոսակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Մաթիաս Գեյնզա Էրնեկյան (մասնակցել է հեռախոսակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա), Խոսե Լուիս Պերսիկո (մասնակցել է հեռախոսակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Դանիել Գիլերմո Սիմոնուտի (մասնակցել է հեռախոսակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում), Խորխե Ալբերտո Դել Ագիլա (մասնակցել է հեռախոսակապի միջոցով իրական ժամանակի ռեժիմում):* | ***Board Members*** *Juan Pablo Gechidjian (participated by conference call), Matias Gainza Eurnekian (participated by conference call), Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest), Jose Luis Persico (participated by conference call), Daniel Guillermo Simonutti (participated by conference call), Jorge Alberto Del Aguila (participated by conference call).* |
| ***Գործադիր տնօրեն՝ Տ.Դավթյան:*** | ***CEO: T. Davtyan*** |
| ***Հրավիրված անձինք՝*** *Լ.Յորդանյան, Է. Հակոբյան, Լ.Սարգսյան, Խուան Կարլոս Օսկոյդի, Հ. Ամիրաղյան:* | ***Invitees:*** *L. Yordanyan, E. Hakobyan, L. Sargsyan, Juan Carlos Ozcoidi, H.Amiraghyan* |
| **Օրակարգ** | **Agenda** |
| 3. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին: | 3. Payment of 2014 interim dividends of Converse Bank CJSC |

| | |
|---|---|
| Խորհրդի նիստը բացեց "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը: Արմեն Տեր-Տաճատյանը տեղեկացրեց, որ Խորհրդի բոլոր անդամները մասնակցում են և քանի որ կա քվորում, Խորհրդի նիստը հայտարարեց բացված: | Armen Ter-Tachatyan, the Chairman of Board of Converse Bank CJSC, opened the Board meeting. Since all Board members were taking part and made a quorum he declared the session of the Board open. |
| ***Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ՝ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին:*** <br><br> Լսեցին "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Գործադիր տնօրեն Տ. Դավթյանի զեկույցը՝ "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մասին: <br><br> Տիգրան Դավթանը նշեց, որ "Կոնվերս Բանկ" ՓԲԸ ֆինանսատնտեսական գործունեության 2013թ.-ի արդյունքներով "Կոնվերս Բանկ" ՓԲԸ ընդհանուր ժողովի որոշմամբ բաժնետերերին բաշխվել է **286,020,612** ՀՀ դրամի շահութաբաժիններ, ուստի, հիմք ընդունելով "Բանկերի և բանկային գործունեության մասին" ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի և "Կոնվերս Բանկ" ՓԲԸ կանոնադրության 8-րդ գլխի պահանջները առ այն, որ միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50%-ը, 2014թ. համար բաժնետերերին կարող է տրամադրվել մինչև 143 միլիոն ՀՀ դրամ միջանկյալ շահութաբաժիններ: <br><br> Տիգրան Դավթյանն առաջարկեց որպես 2014թ. միջանկյալ շահութաբաժիններ վճարել բաժնետերերին 142,749,206 ՀՀ դրամ, որից 142,745,906 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 3,300 ՀՀ դրամը՝ | ***With regard to Agenda Item 3 – Payment of 2014 interim dividends of Converse Bank CJSC*** <br><br> Converse Bank CJSC CEO T.Davtyan reported on 2014 financial results of Converse Bank CJSC. <br><br> Tigran Davtyan also stated that based on 2013 financial results of Converse Bank CJSC, dividends of AMD **286,020,612** were paid to shareholders by the decision of the General Meeting; therefore based on the requirements of the RA Law on Banks and Banking Activities, Article 36.2 and Converse Bank CJSC Charter, Chapter 8, according whereto the interim dividend amount could not surpass 50% of dividends paid based on the financial results of the previous financial year, interim dividends of up to AMD 143M could be paid to shareholders for 2014. <br><br> Tigran Davtyan proposed to pay AMD 142,749,206 as interim dividends for 2014, of which AMD142,745,906 for ordinary shares and AMD 3,300 for preference shares. |

| | |
|---|---|
| արտոնյալ բաժնետոմսերի դիմաց: | |
| Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանը և Խորհրդի անդամներ Ջուան Պաբլո Գեչիդջյանը, Մաթիաս Գեյնզա Էռնեկյանը, Արսեն Գամաղելյանը (Տեր Հովել քահանա), Խոսե Լուիս Պերսիկոն, Դանիել Գիլերմո Սիմոնուտին, Խորխե Ալբերտո Դել Ագիլան ղեկավարվելով "Կոնվերս Բանկ" ՓԲԸ կանոնադրության 9.3.2 կետով, հայտնեցին իրենց համաձայնությունը՝ բաժնետերերին միջանկյալ շահութաբաժիններ վճարելու առաջարկի հետ: | Chairman of Board Armen Ter-Tachatyan and the Board members Juan Pablo Gechidjian, Matias Gainza Eurnekian, Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest), Jose Luis Persico, Daniel Guillermo Simonutti and Jorge Alberto Del Aguila governed by Converse Bank CJSC Charter – Clause 9.3.2, expressed their assent to approve the proposal of payment of interim dividends to shareholders. |
| **Որոշեցին՝** | ***Resolution*** |
| 1. "Կոնվերս Բանկ" փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին 2014թ. համար տրամադրել միջանկյալ շահութաբաժիններ՝ 142,749,206 ՀՀ դրամի չափով, որից 142,745,906 ՀՀ դրամը՝ սովորական բաժնետոմսերի դիմաց, իսկ 3,300 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց, համապատասխանաբար՝<br>"Ըդվանսդ Գլոբալ Ինվեսթմենթս" ԷԼԷԼՍԻ-ին՝ 135,608,611 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց, 3,300 ՀՀ դրամը՝ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց,<br>Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցուն՝ 7,137,295 ՀՀ դրամ սովորական բաժնետոմսերի դիմաց: | 1. Pay interim dividends to shareholders of Converse Bank CJSC Charter for 2014 to the amount of AMD 142,749,206, of which AMD142,745,906 for common shares and AMD 3,300 for preference shares; accordingly<br>Advanced Global Investments LLC: AMD135,608,611 for common shares and AMD 3,300 for preference shares; and<br>Mother See Holy Etchmiadzin: AMD 7,137,295 for common shares. |
| 2. Միջանկյալ շահութաբաժինների վճարումը արտոնյալ և սովորական բաժնետոմսերի դիմաց կատարել ոչ շուտ, քան **2015թ. ապրիլի 6-ը:** | 2. Effect payment of dividends for preference and common shares no sooner than by **April 6, 2015.** |

| ՔԱՂՎԱԾՔ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ №6 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ | ConverseBank | EXTRACT FROM "CONVERSE BANK" CJSC BOARD MEETING MINUTES №6 |
|---|---|---|

| | |
|---|---|
| 3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: | 3. The present Resolution comes into effect from the date of approval. |
| 4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել "Կոնվերս Բանկ" ՓԲԸ Խորհրդի նախագահ Արմեն Տեր-Տաճատյանի վրա: | 4. Assign Chairman of Board of Converse Bank CJSC Armen Ter-Tachatyan to provide control over the enforcement of this Resolution. |
| *Նշումներ*<br><br>Քվեարկության արդյունքներ՝<br><br>Արմեն Տեր-Տաճատյան՝ կողմ<br>Ջուան Պաբլո Գեչիջյան՝ կողմ<br>Արսեն Գամաղելյան (Տեր Հովել քահանա)՝ կողմ<br>Մաթիաս Գեյնզա Էրնեկյան՝ կողմ<br>Խոսե Լուիս Պերսիկո՝ կողմ<br>Դանիել Գիլերմո Սիմոնուտի՝ կողմ<br>Խորխե Ալբերտո Դել Ագիլա՝ կողմ | **Notes**<br><br>Voting results:<br><br>Armen Ter-Tachatyan-aye<br>Juan Pablo Gechidjian-aye<br>Arsen Gamaghelyan (Ter Hovel Archpriest)-aye<br>Matias Gainza Eurnekian-aye<br>Jose Luis Persico-aye<br>Daniel Guillermo Simonutti-aye<br>Jorge Alberto Del Aguila-aye |

ՔԱՂՎԱԾՔՆ ԻՍԿԱԿԱՆԻ ՀԵՏ ՃԻՇՏ Է
**EXTRACT IS TRUE TO THE ORIGINAL**

ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ՝
ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆ

EXECUTIVE DIRECTOR
TIGRAN DAVTYAN